



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ  
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ  
(AMICUS CURIAE) № 02/21

25.01.2021թ.

ք. Երևան

Քաղաքացի Իոհաննա Չախմախյանը (այսուհետ՝ Դիմող) դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 21-րդ հոդվածի «դ» կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցով:

Մասնավորապես, Դիմողը վիճարկում է ՀՀ ընտանեկան օրենսգրքի 21-րդ հոդվածի «դ» կետի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 78-րդ և 79-րդ հոդվածներին:

Դիմողը վիճարկվող իրավանորմի սահմանադրականությանն անդրադարձել է ՀՀ ընտանեկան օրենսգրքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի լույսի ներքո, որի արդյունքում վերջինս արձանագրել է, որ ամուսինը կամ ամուսինները, առանց ընտանիք ստեղծելու մտադրության գրանցելով ամուսնությունը, այդ փաստի ուժով ունեն նախադրյալ/հիմք ամուսնությունն անվավեր ճանաչելու համար, այսինքն՝ անհրաժեշտ հիմքերի առկայությունն ամուսնուն կամ ամուսիններին թույլ է/են տալիս համապատասխանեցնել իր/իրենց վարքագիծը վկայակոչված իրավակարգավորմանը համահունչ և իրավաչափ ակնկալիք ձևավորել ոչ միայն հայցադիմումի վարույթ ընդունման, այլև հայցապահանջի բավարարման առումով:

Ըստ Դիմողի՝ որպես Եվրոպայի խորհրդի անդամ պետություն՝ Հայաստանի Հանրապետությունը պետք է ապահովի, որ իր երկրի դատարանակազմությունը և դատական ընթացակարգերը համապատասխանեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի պահանջներին, որպեսզի երաշխավորվի անձի դատարան դիմելու իրավունքը:

Տվյալ դեպքում, Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս Ազգային ժողովի, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 20-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանելով ամուսնությունն անվավեր ճանաչելու հիմքերը՝ ըստ էության, սահմանել է իրավակարգավորում,

համաձայն որի՝ ամուսիններին կամ ամուսնուն հնարավորություն է ընձեռնվել անհրաժեշտ փաստակազմի առկայության պարագայում համապատասխանեցնել վարքագիծն այդ իրավանորմին՝ պահանջելով գրանցված ամուսնության անվավերություն: Այսինքն՝ ամուսնությունն անվավեր ճանաչելու հիմքերի առկայությունը ոչ միայն իրավական շահագրգռվածության նախադրյալ է դատարան դիմելու, այլև՝ պահանջի բավարարման համար:

Այսպիսով, ստացվում է այնպես, որ ամուսինները կամ նրանցից մեկը, առանց ընտանիք ստեղծելու մտադրության գրանցելով ամուսնությունը, կարող են/է անվավեր ճանաչել այն՝ դրանով իսկ վերականգնելով մինչև իրավախախտման պահը գոյություն ունեցող դրությունը: Այսպիսով, օրենսդիրը, ունենալով իրավակարգավորման համապատասխան միջոցների ձևերի և մեթոդների գործադրմամբ իրավահարաբերությունների սուբյեկտների միջև ներդաշնակ վարքագիծ դրսևորելու պահանջ ապահովելու խնդիր, նախատեսել է այն իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի շրջանակը՝ «1. ամուսնությունը պետք է գրանցված լինի և 2. ամուսինները կամ նրանցից մեկը չպետք է ընտանիք ստեղծելու մտադրություն ունեցած լինեն», որոնց առկայությունը հնարավորություն է տալիս ամուսնուն կամ ամուսիններին՝ անվավեր ճանաչել առանց ընտանիք ստեղծելու մտադրության գրանցված ամուսնությունը:

Վերոգրյալի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի և ՀՀ սահմանադրական դատարանի 07.09.2010 թվականի թիվ ՍԴՈ-906 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների համադրումից՝ Դիմողը եզրահանգել է, որ յուրաքանչյուր դեպքում անձն իր դատարան դիմելու իրավունքը կարող է իրացնել միայն այն դեպքում, երբ տվյալ գործի առնչությամբ ունի իրավական շահագրգռվածություն:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող իրավանորմով արհեստականորեն և անհամաչափ սահմանափակվում է ամուսիններից որևէ մեկի ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջով դատարան դիմելու իրավունքը, քանի որ դատարան դիմելու անհրաժեշտ պայման է համարվում կեղծ ամուսնության մասին չիմանալու հանգամանքը:

### **ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ**

Այսպես, Դիմողը վիճարկում է ՀՀ ընտանեկան օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 21-րդ հոդվածի «դ» կետի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 61-րդ

հողվածի 1-ին մասին, 63-րդ հողվածի 1-ին մասին, 78-րդ և 79-րդ հողվածներին:

Օրենսգրքի վիճարկվող 21-րդ հողվածի «դ» կետի բովանդակությունը հետևյալն է.  
*Ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջ ներկայացնելու իրավունք ունեն՝  
դ) ամուսնության կեղծ լինելու մասին չիմացող ամուսինը ...:*

ՀՀ Սահմանադրության 61-րդ հողվածի 1-ին մասի համաձայն՝

*1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:*

ՀՀ Սահմանադրության 63-րդ հողվածի համաձայն՝

*1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:*

ՀՀ Սահմանադրության 78-րդ հողվածի համաձայն՝

*Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:*

ՀՀ Սահմանադրության 79-րդ հողվածի համաձայն՝

*Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:*

Այսպես, Դիմողն Օրենսգրքի վերը նշված դրույթը վիճարկում է նույն Օրենսգրքի 20-րդ հողվածի 2-րդ մասի լույսի ներքո, համաձայն որի՝

2. Անվավեր է ճանաչվում սույն օրենսգրքի 10-րդ, 11-րդ հողվածներով և 12-րդ հողվածի 3-րդ մասով նախատեսված՝ ամուսնությանն արգելք հանդիսացող հանգամանքների առկայությամբ կնքված ամուսնությունը, ինչպես նաև այն ամուսնությունը, երբ ամուսինները կամ նրանցից մեկը ամուսնությունը գրանցել են առանց ընտանիք ստեղծելու մտադրության (կեղծ ամուսնություն):

Սահմանադրության 61-րդ հողվածի և 63-րդ հողվածի սահմանադրաիրավական նորմերը համանման բովանդակությամբ սահմանված էին մինչև 2015թ. դեկտեմբերի 6-ի

հանրաքվեով ընդունված սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներում, որոնց վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանն իր դիրքորոշումն է արտահայտել 2006թ. հոկտեմբերի 18-ի ՍԴՈ-652, 2006թ. նոյեմբերի 16-ի ՍԴՈ-665, 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 և մի շարք այլ որոշումներում:

Նշված որոշումներով բազմիցս անդրադառնալով արդարադատության մատչելիության և արդյունավետության խնդիրներին, առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 1, 3, 14, 18, 19, 42, 43 և այլ հոդվածներով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի, միջազգային իրավական այլ փաստաթղթերում ամրագրված հիմնադրույթներով, վկայակոչելով նաև ժողովրդավարության զարգացման միջազգային փորձն ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան՝ ՀՀ Սահմանադրական դատարանն կարևորել է անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար նորմատիվ իրավական բավարար նախադրյալների ստեղծումն ու զարգացումը՝ հատկապես միջազգային այն պարտավորությունների շրջանակներում, որպիսիք Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է Եվրոպայի խորհրդի առջև: Դատական պաշտպանության իրավունքն իր ամրագրումն է գտել մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում, այդ թվում՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950թ. եվրոպական կոնվենցիայում և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական նախադեպերում: Այս իրավունքի հիմնական բովանդակությունը հանգում է անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքի երաշխավորմանը և պետության կողմից այդ իրավունքի իրացման համար արդյունավետ միջոցների և պայմանների ստեղծման պարտականությանը: Անձի իրավունքների ապահովման ու պաշտպանության տեսանկյունից Սահմանադրության 18-րդ հոդվածի նպատակը իրավունքների խախտումների մասին անձի պնդումների դատական քննության և այդպիսի խախտումների հետևանքները վերացնելու իրավունքի երաշխավորումն է: Այդ իրավունքը սահմանափակման ենթակա չէ, և արդար դատավարության իրավունքը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնական հատկանիշներից մեկն է: Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման

գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում:

ՀՀ Սահմանադրական դատարանը 2007 թվականի նոյեմբերի 28-ի ՍԴՈ-719 որոշման մեջ նշել է. «6. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ հայցը կամ դիմումը դատարան՝ իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրավունքների, այդ թվում դատական պաշտպանության իրավունքի կրող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր իրավունքների տարաբնույթ խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես էլ մասնավոր անձանց կողմից: Իշխանության ոտնձգություններից անձի պաշտպանվելու ամենաարդյունավետ միջոցը դատարան դիմելու նրա իրավունքն է, որը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես և բոլոր այլ իրավական պետություններում, ունի սահմանադրական (հիմնարար) իրավունքի բնույթ (ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մաս): Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից: Ակնհայտ է, որ առաջին հերթին այս պահանջը վերաբերում է դատարաններին, քանի որ այդ մարմիններն են, որ օժտված են իրավական պաշտպանության համապարփակ լիազորություններով: Բացի դրանից, դատական իշխանությունն է, որ անկախ է բոլոր այլ մարմիններից և պարտավոր է վերահսկել իշխանության մյուս ճյուղերին պատկանող բոլոր մարմինների կողմից իրավաչափ գործելու իրենց պարտականության կատարումը, վերացնելով այդ մարմինների այն իրավական ակտերը, գործողությունները կամ անգործությունը, որոնք խախտում են անձանց սուբյեկտիվ իրավունքները կամ, այլ կերպ՝ ոտնձգում են Սահմանադրությամբ երաշխավորված իրավակարգի դեմ»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում առանձնահատուկ կարևորել է, որ պետությունները պարտավոր են իրենց ներպետական օրենսդրությամբ անհրաժեշտ իրավական նախադրյալներ ստեղծել անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար:

Այսինքն՝ անձը, դիմելով դատարան, պետք է լիարժեք դատական պաշտպանության իրավունք ունենա, ապահովված լինի արդար դատաքննություն իրականացնելու պետության պարտավորությամբ, իր իրավունքների լիարժեք պաշտպանության լեգիտիմ ակնկալիքով:

ՀՀ Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է իրավական որոշակիության և համաչափության սկզբունքներին: 2019 թվականի ապրիլի 2-ի ՍԴՈ-1452 որոշման համաձայն՝ «Իրավական որոշակիության սկզբունքն ընկած է Սահմանադրության անփոփոխելի 1-ին հոդվածի հիմքում, որով սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, **իրավական պետություն է:**

Իրավական պետությունը ենթադրում է իրավական օրենքի առկայություն, որը պետք է լինի հնարավորինս հստակ ու որոշակի և հնարավորություն տա դրա հասցեատերերին ձևավորելու և դրսևորելու համապատասխան վարքագիծ: Վերոնշյալ դիրքորոշումը հաստատվում է Սահմանադրական դատարանի 08.04.2008թ. ՍԴՈ-753 որոշմամբ, որում, մասնավորապես, նշվում է. «Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլնի, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը»:

Անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին՝ Սահմանադրական դատարանն իր մեկ այլ՝ ՍԴՈ-1176 որոշմամբ կարևորել է նաև օրենսդրության մեջ կիրառվող հասկացությունների հստակությունը, նշելով, որ «...իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող

հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության»:

Վերոգրյալով պայմանավորված՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է ինչպես հնարավորինս հստակ իրավակարգավորման առկայություն, այնպես էլ դրա կանխատեսելիության ապահովում: Մասնավորապես, իրավակարգավորման ձևակերպումը պետք է հնարավորություն տա անձին ոչ միայն դրան համապատասխան ձևավորելու իր վարքագիծը, այլև կանխատեսելու, թե ինչպիսի՞ն կարող են լինել հանրային իշխանության գործողությունները, և ի՞նչ հետևանքներ կառաջանան տվյալ իրավակարգավորման կիրառման արդյունքում»:

2016 թվականի մայիսի 3-ի ՍԴՌ–1270 որոշման մեջ արտահայտվել է հետևյալ դիրքորոշումը. «7. ՀՀ Սահմանադրության 1–ին հոդվածով ամրագրված իրավական պետության կարևորագույն հատկանիշներից է իրավունքի գերակայությունը, որի ապահովման գլխավոր պահանջներից են իրավական որոշակիության սկզբունքը, իրավահարաբերությունների կարգավորումը բացառապես այնպիսի օրենքներով, որոնք համապատասխանում են որակական որոշակի հատկանիշների՝ հստակ են, կանխատեսելի, մատչելի: ՀՀ սահմանադրական դատարանը մի շարք որոշումներում (ՍԴՌ–630, ՍԴՌ–1142) անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին և գտել է, որ այն անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան հարաբերությունների մասնակիցները ողջամիտ սահմաններում ի վիճակի լինեն կանխատեսել իրենց վարքագծի հետևանքները և վստահ լինեն ինչպես իրենց պաշտոնապես ճանաչված կարգավիճակի անփոփոխելիության, այնպես էլ ձեռք բերված իրավունքների և պարտավորությունների հարցում»:

Ելնելով վերևում մեջբերված դիրքորոշումների վերլուծությունից՝ գտնում ենք, որ վիճարկվող դրույթի սահմանադրականությունը խնդրահարույց է հետևյալ պատճառաբանությամբ.

Նախ, հարկ է նկատել, որ գործող կարգավորմամբ վիճարկվող դրույթում առկա սահմանափակումը՝ կեղծ լինելու հիմքով ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջով դատարան դիմելու իրավունք վերապահելը միայն այդ մասին չիմացող ամուսուն, ըստ էության, նպատակ ունի բացառելու կամ, առնվազն, նվազագույնի հասցնելու կեղծ ամուսնությունների դեպքերը: Հակառակ դեպքում՝ նման

սահմանափակման բացակայության պայմաններում, անձինք ինչ-ինչ նպատակներից էլնելով կկնքեն կեղծ ամուսնություն՝ վստահ լինելով, որ ցանկացած ժամանակ կարող են դիմել դատարան և պահանջել այն անվավեր ճանաչելու: Այլ կերպ ասած՝ գործող կարգավորումը հնարավորություն է տալիս կանխել կեղծ ամուսնությունների կնքումը՝ թույլ չտալով, որպեսզի անձինք արհեստականորեն գրանցեն կեղծ ամուսնություններ:

Ճիշտ է, նման կարգավորումն, ըստ էության, ուղղված է ապահովելու քաղաքացիական շրջանառության կայունությունն ու քաղաքացիական հարաբերությունների մասնակիցների, հատկապես՝ կեղծ ամուսնության մասին չիմացող (բարեխիղճ) ամուսնու իրավունքների և շահերի պաշտպանությունն ու հավասարակշռությունը, սակայն այն ինքնին խնդիրներ է հարուցում անձի դատական պաշտպանության և այլ հիմնական իրավունքների իրականացման առումով:

Մասնավորապես, վիճարկվող դրույթն իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին համապատասխանելու տեսանկյունից խնդրահարույց է:

Այսպես, Օրենսգրքի 20-րդ հոդվածը վերտառված է՝ **«Ամուսնությունն անվավեր ճանաչելը»**, որի առաջին մասի բովանդակությունից հետևում է, որ դրանում շարադրված են ամուսնությունն անվավեր ճանաչելու **հիմքերը**՝ հղում անելով Օրենսգրքի 10-րդ, 11-րդ և 12-րդ հոդվածների վրա: Նույն հոդվածում որպես ամուսնության անվավերության հիմք է սահմանված դրա կեղծ լինելը, այսինքն՝ «այն ամուսնությունը, երբ **ամուսինները** կամ նրանցից մեկը ամուսնությունը գրանցել են առանց ընտանիք ստեղծելու մտադրության (կեղծ ամուսնություն)»:

Օրենսգրքի 21-րդ հոդվածը վերտառված է՝ **«Ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջ ներկայացնելու իրավունք ունեցող անձինք»**: Այսինքն՝ նշված հոդվածում թվարկվում են այն սուբյեկտները, որոնք իրավունք ունեն դիմել դատարան վերը նշված հիմքերից որևէ մեկով ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջով: Օրենսդիրը նույն հոդվածի վիճարկվող «դ» կետում ամուսնության՝ կեղծ լինելու հիմքով անվավեր ճանաչելու պահանջով դատարան դիմելու իրավունք ունեցող միակ սուբյեկտ է նախատեսել միայն ամուսնության կեղծ լինելու մասին չիմացող ամուսնուն: Մասնավորապես, վիճարկվող դրույթում նշվում է, որ ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջ ներկայացնելու իրավունք ունեն՝ դ) ամուսնության կեղծ լինելու մասին չիմացող **ամուսինը**:



Օրենսգրքի 20-րդ և 21-րդ հոդվածների՝ վերևում մեջբերված իրավակարգավորումների միջև առկա է ակնհայտ հակասություն: Բանն այն է, որ Օրենսգրքի 20-րդ հոդվածի իմաստով՝ կեղծ է համարվում ոչ միայն այն ամուսնությունը, որն ամուսիններից մեկը գրանցել է առանց ընտանիք ստեղծելու մտադրության, այլ նաև այն ամուսնությունը, որն ամուսինները գրանցել են առանց ընտանիք ստեղծելու մտադրության: Այսինքն, ըստ օրենքի իմաստի, կեղծ է ոչ միայն այն ամուսնությունը, որը գրանցելիս ամուսիններից մեկը մտադրություն չի ունեցել ընտանիք կազմել, այլ նաև այն ամուսնությունը, երբ երկու ամուսիններն էլ ընտանիք կազմելու իրական մտադրություն չեն ունեցել: Այլ կերպ ասած՝ երկու ամուսինների մոտ ընտանիք կազմելու մտադրության բացակայությամբ կնքված ամուսնությունը կեղծ է, և այդպիսի ամուսնությունը ենթակա է անվավեր ճանաչման ՀՀ ընտանեկան օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորման հիմքով:

Վիճարկվող դրույթում, սակայն, օրենսդիրն արգելափակել է կեղծ ամուսնությունն անվավեր ճանաչելու հնարավորությունն այն դեպքում, երբ երկու ամուսիններն էլ այն գրանցել են առանց ընտանիք կազմելու մտադրության, քանի որ կեղծ ամուսնության հիմքով այն անվավեր ճանաչելու պահանջով դատարան դիմելու իրավունք ունեցող միակ սուբյեկտ է նախատեսել միայն ամուսնության կեղծ լինելու մասին չիմացող ամուսնուն: Տրամաբանական չէ կեղծ ամուսնության անվավերության պահանջ դատարան ներկայացնելու բացառիկ իրավունք սահմանել միայն ամուսնության կեղծ լինելու մասին չիմացող ամուսնու համար այն դեպքում, երբ օրենքը կեղծ լինելու հիմքով ամուսնության անվավերության հիմք է նախատեսել նաև երկու ամուսինների իմացությամբ գրանցված կեղծ ամուսնությունը:

Գտնում ենք, որ վիճարկվող դրույթը չի համապատասխանում իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին՝ վերևում բերված հիմնավորումներով: Փաստորեն, գործող կարգավորումները բացառում են երկու ամուսինների իմացությամբ գրանցված կեղծ ամուսնությունն անվավեր ճանաչելու հնարավորությունը, ինչը չի կարող արդյունավետ և գործուն մեխանիզմ համարվել մարդու հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման, մասնավորապես՝ ամուսնության ազատության համատեքստում (այլ անձի հետ իրական ամուսնություն գրանցելուն խոչընդոտելու իմաստով):

Հարկ է նշել, որ ՀՀ ընտանեկան օրենսգիրքը սահմանում է այն հետևանքները, որոնք կարող են առաջանալ դատական կարգով ամուսնությունն անվավեր ճանաչելիս:

Այսպես, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 23-րդ հոդվածի համաձայն՝

1. *Դատարանի կողմից անվավեր ճանաչված ամուսնությունը չի առաջացնում սույն օրենսգրքով ամուսինների համար նախատեսված իրավունքներ և պարտականություններ, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված դեպքերի:*

2. *Ամուսնությունն անվավեր ճանաչած անձանց կողմից համատեղ ձեռք բերված գույքի նկատմամբ կիրառվում են բաժնային սեփականության մասին քաղաքացիական օրենսդրության նորմերը:*

3. *Ամուսնությունն անվավեր ճանաչած անձանց կնքած ամուսնական պայմանագիրը, որպես կանոն, ճանաչվում է անվավեր:*

4. *Ամուսնությունն անվավեր ճանաչելը չի ազդում այդպիսի ամուսնությունից ծնված կամ ամուսնությունն անվավեր ճանաչելու պահից հետո՝ երեք հարյուր օրվա ընթացքում, ծնված երեխաների իրավունքների վրա:*

5. *Ամուսնությունն անվավեր ճանաչելու մասին վճիռ կայացնելիս դատարանը կարող է ճանաչել ամուսնուց ապրուստի միջոց ստանալու՝ մյուս ամուսնու (բարեխիղճ ամուսնու) իրավունքը, որի իրավունքները խախտվել են նման ամուսնության կնքմամբ, իսկ մինչև ամուսնությունն անվավեր ճանաչելու պահը ձեռք բերված համատեղ գույքը բաժանելիս իրավունք ունի կիրառելու սույն օրենսգրքի 26-րդ հոդվածի նորմերը, ինչպես նաև լրիվ կամ մասնակիորեն վավեր ճանաչելու ամուսնական պայմանագիրը:*

*Բարեխիղճ ամուսինն իրավունք ունի պահանջելու հատուցել իրեն պատճառված գույքային վնասը՝ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով:*

6. *Ամուսնությունն անվավեր ճանաչելու դեպքում բարեխիղճ ամուսինն իրավունք ունի պահպանելու ամուսնության պետական գրանցման ժամանակ ընտրված ազգանունը:*

Ամուսնության անվավերության և, հետևաբար, ամուսնության անվավերության հետևանքներ կիրառելու մասին պահանջ դատարանին ներկայացնելու իրավունքը վերապահելով միայն կեղծ ամուսնության մասին չիմացող ամուսնուն՝ օրենսդիրը բացառել է ամուսնության անվավերության հետևանքների կիրառման հնարավորությունն այն դեպքերում, երբ ամուսնությունը երկու ամուսինների միջև

կնքվել է առանց ամուսնություն կնքելու իրական մտադրության երկուստեք՝ փոխադարձ իմացությամբ, կամ եթե կեղծ ամուսնությունը կնքվել է ամուսնությունն անվավեր ճանաչելու մասին դատարան դիմող ամուսնու իմացությամբ կամ մտադրությամբ:

Ավելին, վիճարկվող դրույթում որևէ այլ անձ (ֆիզիկական կամ իրավաբանական անձ, պետություն կամ համայնք) իրավասու չէ դիմել դատարան մեկ այլ անձի (անձանց) ամուսնությունը կեղծ լինելու հիմքով անվավեր ճանաչելու պահանջով:

Նման իրավակարգավորումը վտանգում է ոչ միայն ամուսնության կեղծ լինելու մասին իմացող անբարեխիղճ ամուսնու, այլ նաև այլ շահագրգիռ անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Բանն այն է, որ անձանց կեղծ ամուսնությունից կարող է տուժել ոչ միայն ամուսնության կեղծ լինելու մասին չիմացող ամուսինը, այլ նաև այլ անձինք: Վերջինները կեղծ ամուսնությունը դատական կարգով անվավեր ճանաչելու պահանջ ներկայացնելու իրավունք պետք է ունենան՝ իրենց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար:

Ավելին, չնայած անհատական սահմանադրական դիմումում անդրադարձ չկա, սակայն պետք է նշել, որ կեղծ ամուսնության անվավերության պահանջով դատարան դիմելու իրավունքի վերապահումը միայն ամուսնության կեղծ լինելու մասին չիմացող ամուսնուն վտանգում է ոչ միայն անձի դատական պաշտպանության, այլ նաև այլ հիմնական սահմանադրական իրավունքների իրականացումն ու պաշտպանությունը, քանի որ այլ շահագրգիռ անձինք զրկվում են դատարանի միջոցով իրենց այլ իրավունքները (օրինակ՝ սեփականության իրավունք, ամուսնության ազատություն և այլն) պաշտպանելու հնարավորությունից:

Մասնավորապես, սույն գործով, օրինակ, առաջին ատյանի դատարանն իր թիվ ԵԴ/2245/02/19 որոշման մեջ նշել է. «Դատարանն հանգում է այն եզրակացության, որ հայցվորը չի հանդիսանում ՀՀ ընտանեկան օրենսգրքի 21-րդ հոդվածի «դ» կետի ուժով ամուսնության անվավեր ճանաչման պահանջի իրավունք ունեցող սուբյեկտ, քանի որ իր իսկ պնդմամբ՝ ինքը գիտեր ամուսնության կեղծ լինելու մասին ի սկզբանե, չի հետապնդել ընտանիք կազմելու նպատակ, ոչ մի օր չի ապրել պատասխանողի հետ, և *ամուսնության պետական գրանցման վկայականի ստացումը հետապնդել է արտոնյալ պայմաններով բնակարանի ձեռքբերման նպատակ*»:

Տվյալ դեպքում անձանց կեղծ ամուսնությունից վնաս է կրել արտոնյալ պայմաններով վարկ տրամադրած կազմակերպությունը բաց թողնված օգուտի ձևով, քանի որ արտոնյալ

պայմաններով (օրինակ՝ ցածր տոկոսադրույքով) վարկ է տրամադրել երիտասարդ «ամուսինների», ովքեր ամուսնությունը գրանցել են ձևական, առանց ընտանիք կազմելու իրական մտադրության: Այլ կերպ ասած՝ վարկատուն իր ստանալիք օգուտի (տոկոսների) հաշվին վարկ է տրամադրել անձանց, ովքեր իրականում այդ պայմաններով վարկ ստանալու իրավունք չունենին: Արդյունքում խախտվել է վարկատուի սեփականության իրավունքը, քանի որ վերջինս վարկառուի ամուսնության կեղծ լինելու հետևանքով չի ստացել այն օգուտները, որոնք կստանար քաղաքացիական շրջանառության նորմալ պայմաններում (եթե վարկառուի կեղծ ամուսնությունը գրանցված չլիներ):

Վիճարկվող դրույթը կարող է սահմանափակել նաև անձի՝ ՀՀ սահմանադրության 35-րդ հոդվածով սահմանված ամուսնության ազատությունը, քանի որ երկու ամուսինների իմացությամբ գրանցված կեղծ ամուսնությունը, որը գործող իրավակարգավորումներով հնարավոր չէ անվավեր ճանաչել նրանցից որևէ մեկի պահանջով, խոչընդոտ է հանդիսանալու մեկ այլ՝ իրական ամուսնություն գրանցելու համար: ՀՀ ընտանեկան օրենսգիրքն արգելում է ամուսնություն կնքել այն անձանց միջև, որոնցից թեկուզև մեկը գտնվում է օրենքով սահմանված կարգով գրանցված մեկ այլ ամուսնության մեջ (ՀՀ ընտանեկան օրենսգիրք, հոդվ. 11, կետ «ա»): Ընդ որում, նման խոչընդոտը կարող է սահմանափակել ոչ միայն կեղծ ամուսնություն գրանցած անձի ամուսնանալու ազատությունը, այլ նաև այն անձի, ով ցանկանում է ամուսնանալ այդ անձի հետ:

### Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

- ՀՀ ընտանեկան օրենսգրքի 21-րդ հոդվածի «դ» կետի՝ ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 78-րդ և 79-րդ հոդվածներին համապատասխանությունը խնդրահարույց է:

 Recoverable Signature

*Համակարգող՝*

**X** Lyudvik Davtyan

*Լյուդվիկ Դավթյան*

Signed by: DAVTYAN LYUDVIK 1407840169

